ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 1

"....." ..... 2014 թ. N.....

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարար պարոն Գ. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

Համաձայն 2014 թվականի պետական բյուջեի՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ծրագրերում նախատեսված են միջոցներ «ՀՀ-ում մարդկանց շահագործման երևույթը և դրա դեմ պայքարը արծարծող լրագրողական նյութերի մրցույթի» անցկացման համար: Հաշվի առնելով, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն տարիներ շարունակ արդյունավետ իրականացրել է վերոնշյալ մրցույթը՝ խնդրում ենք 5-օրյա ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել որոշման նախագիծ՝ համաձայն որի ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից նախատեսված համապատասխան միջոցներից 2,338 հազար դրամ վերադարձվի ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդ և որպես դրամաշնորհ՝ տրամադրվի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին՝ «ՀՀ-ում մարդկանց շահագործման երևույթը և դրա դեմ պայքարը արծարծող լրագրողական նյութերի մրցույթը» կազմակերպելու նպատակով:

Հարգանքով՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ